Հավելված
Մասիս համայնքի ղեկավարի
2024 թվականի մայիսի 24 -ի թիվ -Ա որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքը հայտարարում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր ընտրելու մրցույթ հետևյալ թափուր ավտոբուսային/միկրոավտոբուսային երթուղիների սպասարկման իրավունքի ժամանակավոր հատկացման համար՝

NN Ը/Կ	ԵՐԹՈՒՂՈՒ				
	Անվանումը և համարը	Սկզբնակետը /ավտոկայան, ավտոկայարան, ենթակարգավարական կետ/	Վերջնակետը /ավտոկայան, ավտոկայարան, ենթակարգավարական կետ/	Տեսակը /Ավտոբուսային, միկրոավտոբուսային/	Սպասարկման համար պահանջվող ավտոբուսների թիվը /ներառյալ պահուստային ավտոբուսների թիվը/
1	01	Մասիս քաղաք	Նիզամի գյուղ	Միկրոավտոբուս և /կամ/ ավտոբուս	3
2	02	Մասիս քաղաք	Այնթապ գյուղ	Միկրոավտոբուս և /կամ/ ավտոբուս	3

ՑԱՆԿ
ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1.Հայտ՝ համաձայն Հայաստանի հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ա որոշման N 2 ձևի:

2.* Ավտոբուսների և /կամ/ միկրավտոբուսների գրանցման վկայագիր /ժամանակավոր կտրոն/:

3.*Ավտոբուսի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքի առկայությունը հավաստող փաստաթուղթ:

4.* Ավտոբուսն այլ տեսակի վառելիքով շահագործելու կամ վերասարքավորելու /կահավորելու/ դեպքում՝ շահագործման և վերասարքավորման օրինականությունը հաստատող փաստաթուղթ:

5. Հավաքակայանի սեփականության կամ օգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթեր, գիշերակացով երթուղիների դեպքում վերջնակետում ավտոբուսների կայանումը, պահպանումը, նախաուղերթային տեխզննումը և վարորդների բուժզննումն ապահովելու նպատակով կնքված պայմանագրեր:

6. Ավտոկայարանային ծառայություն մատուցող կազմակերպության հետ կնքված սպասարկման նախնական, իսկ ներհամայնքային փոխադրումների դեպքում ենթակարգավարական ծառայություններ մատուցող կազմակերպության հետ ծառայություններ մատուցելու նախնական պայմանագիր /գործող պայմանագրի առկայության դեպքում նախնական պայմանագիր չի պահանջվում/:

Նշված փաստաթղթերի պատճենները ներկայացվում են մեկ օրինակից, կազմակերպության կողմից սոսնձված և ստորագրված փաթեթով:

*Չի ներկայացվում հայտ-պարտավորագիր ներկայացնելու դեպքում:

Մրցույթի անցկացման օրը՝ 2024 թվականի ՀՈՒՆԻՍԻ 6-ԻՆ ժամը 11:00-ին, ՀՀ Արարատի մարզ ք. Մասիս, Հանրապետության Հրապարակ 4, համայնքապետարանի 3-րդ հարկի դահլիճում:

Փաթեթների բացման օրը՝ 2024 թվականի հունիսի 5-ը ժամը 11:00-ին՝ ՀՀ Արարատի մարզ ք. Մասիս Հանրապետության Հրապարակ 4, համայնքապետարանի 3-րդ հարկի դահլիճում:

Հայտերն ընդունվում են ՀՀ Արարատի մարզ ք. Մասիս, Հանրապետության Հրապարակ 4, համայնքապետարանի 4-րդ հարկի 406 աշխատասենյակում ամեն օր ժամը 9:00 - 18:00, բացի շաբաթ և կիրակի օրերից: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետն է 2024 թվականի ՀՈՒՆԻՍԻ 2-Ը ժամը 18:00-ն:

Չվացուցակին ծանոթանալու համար անցնել հետևյալ հղումներով՝

ՀՂՈՒՄՆԵՐ՝ համայնքի ղեկավարի 19 ապրիլի 2024 թվականի թիվ 2957-Ա որոշման N 1 և N 2 հավելվածներ:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝ +374 236-4-30-40 հեռախոսահամարով:

Մրցութային հանձնաժողովի նախագահ՝ **Կորյուն Հակոբյան**